

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԳՈՒԼԵՑԻ.**— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ 1759 ին իր բոլոր ստացուածքները կը կտակէ նոյն վանքին: Նոյն տարին կը պատահի նաև իր մահը Երուսաղէմի մէջ:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ (միս.) ԽԱՍԳԵՂՑԻ (ՊԱՐՈՆ).**— ՌՃԻԱ. (=1672) թուին կրկին անգամ ուխտաւորութեամբ իր կենակցին հետ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և նորոգել կուտայ ձեռագիր ճաշոց մը (ՄՁ. Թ. 12) ուր կը գրէ հետեւեալ յիշատակարանը.

« Ի թուարեութեան հայկազեան սեռի. ՌՃԻԱ. ամին վերջստին կազմեցաւ տարեգիրքս ի քաղաքն սրբոյ երուսաղիմայ ի գուռն սրբոյն Յակոբայ, որդւոյն Զեբեթեայ. որ է պարծանքս Հայոց ազգին, ի յառաջնորդութեան սբ. ուխտիս տէր Եղիազար ածաբան. կաթողիկոսի և Աթոռակալութեան տէր Կիրակոս ածաբան. վրդ.ի եւ ի լուսարարութեան Առաքել սարկաւազին եւ այլ ամենայն միտքանից սուրբ ուխտիս վարդապետաց եւ եպիսկոպոսաց եւ կարգաւորաց սբ. տաճարիս որք սպասաւորութիւն տանեն, տացէ տէր Աստուած կարողութիւն եւ համբերութիւն եւ երկայնմտութիւն ամէն. հանդիպողք սբ. գրոցս յիշեցէք եւ Ած. ողորմի ասացէք խասգեղցի պարոն մահտեսի Հանէսին որ անգամ մի եկեալ էր կենակցաւ իւրով ի սբ. եմ. և այսմ ամի ևս եկն. և հոտս զսբ. գիրքս քանդեալ և հա նորոգել միթէ բարերարն Ած. նորոգէ զհոգիս ննջեցիոց իւրոյ կենակցւոյն Հազրի Վարդին, մեծ պապուն Յովնաննեսին, հօրն Ունիանանին, մօրն Թանխուսին, որդւոյն Ղազարոսին, հարսին Սրբուհոյն, զստերացն Խոնարիին և Մարիալին, եղբօրն Ղարդ Պալուն, հարսին Շարդոսային և Քնարին և այլ ամենայն արեանառու մերձաւորացն կենդանեացն եւ համօրէն ննջեցիոցն որ են առ Ած. փոխեցեալ և որ յիշէ յիշեալ լիցի ի Քսէ. Ա.յն. մերոյ . . . ամէն»:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԶԻՎԵՑԻ.**— Մբ. որդի Մանկասարի. կը դաստիարակուի առ ոտս տիեզերալոյս Թոմմա վրդ.ի, 1433ին